ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

*Համարը* N 141-Ն
*Տիպը* Որոշում
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2017.03.01/14(1289) Հոդ.202
*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ
*Վավերացնող մարմինը*
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 11.03.2017
*Տեսակը* Ինկորպորացիա
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունման ամսաթիվը* 16.02.2017
*Ստորագրման ամսաթիվը* 20.02.2017
*Վավերացման ամսաթիվը*
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Ծանուցում**

Տես սույն որոշման 4-րդ կետը:

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**
**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՍԱՆԴՂԱԿԸ՝ ԸՍՏ ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1365-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 46-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2017 թվականի N 141-Ն

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՍԱՆԴՂԱԿԸ՝ ԸՍՏ ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1365-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 46-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3.2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1365-Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսավորումից բացի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար հատկացվում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ըստ հետևյալ բանաձևի՝

***Լմ=ՈւՕաֆ + Ֆբչ,*** որտեղ՝

Լմ-ն լրացուցիչ միջոցներ են,
ՈւՕաֆ-ն ուսուցչի օգնականների տարեկան աշխատավարձի ֆոնդն է,
Ֆբչ-ն ֆինանսավորման բարձրացված չափաքանակն է, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների աշխատավարձի տարեկան ֆոնդն է:
ՈւՕաֆ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՈւՕաֆ = ՈւՕթ x Մա x Աթ, որտեղ՝

ՈւՕթ-ուսուցչի օգնականների դրույքների թիվն է,
Մա - ուսուցչի օգնականների միջին ամսական աշխատավարձը,
Աթ.- հաշվարկվող ժամանակաշրջանի ամիսների թիվը:
10. Ուսուցչի օգնականների դրույքների թիվը որոշվում է՝
1) ուսուցչի օգնական - ուսումնական հաստատության սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկից: 15 երեխայի համար սահմանվում է 1 ուսուցչի օգնականի դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7 և 7-ից պակաս լինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք: Ուսուցչի օգնականի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է մանկավարժների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի 80 տոկոսի չափով:»:
3. 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» N 46-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և դրա գործողությունը տարածվում է՝
1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2017 թվականի հունվարի 1-ից.
2) Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ից.
3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2018 թվականի սեպտեմբերի 1-ից.
3.1) Երևան քաղաքի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2019 թվականի հունվարի 1-ից.
4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Շիրակի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2019 թվականի սեպտեմբերի 1-ից.
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից.
6) Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:
***(4-րդ կետը փոփ., լրաց. 04.10.18 N 1087-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Կ. Կարապետյան**

2017 թ. փետրվարի 20
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2017 թվականի**
**փետրվարի 16-ի N 141-Ն որոշման**

Ս Ա Ն Դ Ղ Ա Կ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ՝ ԸՍՏ ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

1. Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված բարձրացված չափաքանակով ֆինանսավորումը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, իրականացվում է Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով սահմանվող՝ «Հանրակրթական ուսուցում» և «Հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրերի միջոցների հաշվին՝ ըստ համապատասխան մակարդակների:

2. Սույն սանդղակով սահմանվում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսվող լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի:

| Ծանրության աստիճանը | Մանկավարժահոգեբանական աջակցություն մատուցող մանկավարժական դրույքների քանակը՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թվի հաշվարկի | | | Ամիսների քանակը | Գործակիցը՝ ըստ ֆունկցիաների խանգարումների աստիճանի | Ամսական աշխատավարձի չափը | Ֆինանսավորման բարձրացված չափաքանակը՝ ըստ ֆունկցիաների խանգարումների աստիճանի |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 7-ը ներառյալ | 8-ից 15 | 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար՝ լրացուցիչ | | | | |
| | 1 | | | 2 | 3 | 4 | 5=1x2x3x4 |
| Միջին | 0.5 | 1 | 0.5 | 12 | 0.97 | հաշվետու տարվա ՀՀ պետական բյուջեով սահմանված մանկավարժական աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձ | |
| Ծանր | 0.5 | 1 | 0.5 | 12 | 1 | | |
| Խորը | 0.5 | 1 | 0.5 | 12 | 1.034 | | |

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**